ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/147

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Մառք» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մառք» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Հակոբյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9110-2021 գրությամբ «Մառք» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 31.05.2021թ.-ի թիվ 02/16.4/4774-2021 գրության հիման վրա, 07.06.2021թ.-ին «Մառք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 07.06.2021թ.-ին:

08.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/147 համարի ծածկագիրը:

16.06.2021թ.-ին և 02.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.07.2021թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 31.05.2021թ.-ի թիվ 02/16.4/4774-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի մայիսի 4-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև <<Մառք>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մառք» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 16.06.2021թ.-ին թիվ 02/16.4/5339-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ <<Մառք>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված առարկությունների կապակցությամբ տեղեկացնում եմ, որ Ընկերության հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, քանի որ արձանագրված անհամապատասխանություններն Ընկերության կողմից ընդհանրապես չեն շտկվել:

Ինչ վերաբերում է հրավերով պահանջվող լաբորատոր փորձարկումների պլանի ներկայացման ավելորդությանը կամ նպատակահարմարությանը, ապա տեղեկացնում եմ, որ հրավերի պահանջները և պայմանները սահմանվում են պատասխանատու ստորաբաժանման կազմում ընդգրկված մասնագետների կողմից ներկայացված հայտով, ինչը ներառվում է հրավերում և հաստատվում գնահատող հանձնաժողովի կողմից:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում, ինչը վերջինիս կողմից չի կատարվել:»:

3. <u>«Մառք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.06.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մառք» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9110-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը, 14.06.2021թ.-ին թիվ 52 գրությամբ ներկայացնելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ձեր 07.06.2021թ. թիվ ԱՅ-ԼՕ-2021/147 հայտարարության համաձայն «Մառք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնվել է ընթացակարգ:

Ընկերությունը մասնակցելով ՀՀ Քաղաքաշինության Կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), կողմից հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի (ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն), 24.05.2021թ. էլեկտրոնային փոստով ստանում է գնահատող հանձնաժողովի արձանագրությունը՝ ներկայացված հայտում տեխնիկական մասի անհամապատասխանությունների մասին և համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, մեկ աշխատանքային օրվա ընթացքում առաջարկվում է շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի արձանագրությունում նշված փաթեթի տեխնիկական մասի անհամապատասխանությունները, ընկերությունը նշել է իր առարկությունները՝

Գնահատող հանձնաժողովի կողմից պարզված անհամապատասխանություններ		*«Մառք» ՍՊԸ-ի առաչկություններ*
Հավելված 1.1	*Մասնակցի կողմից որպես ճարտարագետ-շինարար, ճարտարագետ-էներգետիկ, ճարտարագետ-էլեկտրիկ, ճարտարագետ-հիդրոտեխնիկ ներկայացված Մարտին Պետրոսյանի, Սուրեն Գաբրիելյանի, Դավիթ Դավթյանի և Գուրգեն Հակոբյանի մասով նախկինում կատարված աշխատանքների ցանկում լրացված տեղեկությունը չի հավաստում վերը նշված մասնագետների շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության փորձառություն ունենալու հանգամանքը, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել ներկայացված փորձառության համապատասխանությունը հրավերի պահանջներին:*	*Տեխնիկական հսկողության փորձառություն ունենալու հանգամանքը հաստատվում է «Մառք» ՍՊԸ-ի տեխնիկական հսկողության լիցենզիայի ներդիրներով: Ավելին՝ տեղեկանքի 4-րդ սյունյակում նշված են կատարված համանման տեխնիկական հսկողության ծառայությունների պայմանագրերի համարները և կնքման ամսաթվերը:*
Հավելված 1.2	*Բացակայում է աղյուսակի 8-րդ կետի համաձայն պահանջվող օբյեկտի կառուցման առանձին տեսակի աշխատանքները և կոնստրուկցիաների լաբորատոր փորձարկումների պլանը:*	*Նշելով «նկարագիր» սյունյակում «Համաձայն..» ընկերությունը գտել է ոչ նպատակային ու ավելորդ արտատպում գնումների փաթեթում նորմատիվային պահանջները: Օրինակ՝ -Փորձարկումների քանակը բետոնի համար, յուրաքանչյուր 50 մ^3-ի հիմքերի համար և յուրաքանչյուր 20 մ^3 մյուս կոնստրուկցիաների համար, մեկ նմուշ է և այլն... -Չունենալով կապալառուի կողմից մշակված «Աշխատանքների իրականացման նախագիծ», անհրաժեշտ է արժանահավատ լաբորատոր փորձարկումների պլանի կազմումը:*
	Որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող	*Ներկայացված Երևան քաղաքի*

	փաստաթուղթ՝ մասնակցի կողմից ներկայացված պայմանագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին (ներկայացված պայմանագիրը նմանատիպ չի):	*մանկապարտեզների հիմնանորոգման ԵՔ-ԳՀԾՁԲ-20/182 պայմանագրի միայն 1.1 կետում է թյուրիմացաբար նշված «վերանորոգում» բառը, մնացած մասերում նշված է «հիմնանորոգում», յադ թվում ընկերության կողմից ներկայացված բոլոր հանձման-ընդունման արձանագրություններում: Հետևաբար, բոլոր մանկապարտեզները դասվում են որպես բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ (IV կատեգորիա):*

Գնահատող հանձնաժողովի արձանագրությունը ստանալուց հետո հեռախոսով կապնվեցի հանձնաժողովի անդամներ Դ. Շատվերյանի և Ռ. Եղիազարյանի հետ և տեղեկացրեցի իմ առարկությունների մասին, ստանալով նրանց ոչ միանշանակ դիրքվորոշումը և նկատի ունենալով, որ կառավարական շենքերում գործում է անցագրային համակարգ, խնդրեցի կազմակերպել հանդիպում գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Միրզոյանի հետ: Ցավոք սահմանված ժամկետում չհաջողվեց իմ առարկությունների նախնական քննարկման կազմակերպումը և ձախողվեց սահմանված ժամկետում ճշտումների ներկայացման պահանջը:

Գտնում եմ, որ տեխնիկական մասի անհամապատասխանությունների մասին Գնահատող հանձնաժողովի որոշումը իրավաչափ չէ, հետևաբար վերջինիս պահանջը Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգը ենթակա է մերժման:»:

4. <u>ՍՑ-LO-2021/147 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.05.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մառք» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով

սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1-ին կետի համաձայն՝ «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1.1-ում՝ Մասնակցի կողմից որպես ճարտարագետ-շինարար, ճարտարագետ-էներգետիկ, ճարտարագետ-էլեկտրիկ, ճարտարագետ-հիդրոտեխնիկ ներկայացված Մարտին Պետրոսյանի, Սուրեն Գաբրիելյանի, Դավիթ Դավթյանի և Գուրգեն Հակոբյանի մասով նախկինում կատարված աշխատանքների ցանկում լրացված տեղեկությունը չի հավաստում վերը նշված մասնագետների շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության փորձառություն ունենալու հանգամանքը, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել ներկայացված փորձառության համապատասխանությունը հրավերի պահանջներին: Իսկ Հավելված 1.2-ում բացակայում է աղյուսակի 8-րդ կետի համաձայն պահանջվող օբյեկտի կառուցման առանձին տեսակի աշխատանքները և կոնստրուկցիաների լաբորատոր փորձարկումների պլանը: Նշված պլանն իրենից ներկայացնում է նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների քանակի և փորձարկումների քանակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և ստանդարտների: Որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ՝ մասնակցի կողմից ներկայացված պայմանագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին (ներկայացված պայմանագիրը նմանատիպ չի):

v. Նույն արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մառք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև 25.05.2021թ.-ը ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 24.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի marq.htg@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում:

vii. Հանձնաժողովի 26.05.2021թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1-ին կետի համաձայն՝ «Մառք» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների վերաբերյալ ընդհանրապես շտկում չի ներկայացվել, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը,

ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9110-2021 գրությամբ «Մառք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում ներառում է, հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և

առավելագույն միավորները, ինչպես նաև մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը: Ընդ որում, շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և (կամ) տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում գնային պայմանի համար սահմանվող չափանիշը չի կարող պակաս լինել քսան և ավել երեսուն միավորից:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ժ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում հայտով ներկայացնում է՝ հայտերի գնահատման համար հրավերով պահանջված փաստաթղթերը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր

(տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.05.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է … 3) նախկինում կատարած պայմանագրերի (համաձայնագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ պայմանով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 5 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է

նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նմանատիպ է համարվում IV կամ IV ից բարձր կատեգորիայի ռիսկայնության աստիճանի օբյեկտի կառուցման կամ ամբողջական վերակառուցման կամ ամբողջական ուժեղացման աշխատանքների նկատմամբ մատուցված ծառայությունը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում,

4) աշխատակազմի մասին տվյալներ՝ համաձայն սույն հրավերի Հավելված 1.1-ի, որին կցվում են որակավորումը հավաստող փաստաթղթերը՝ ԲՈՒՀ-ի կողմից շնորհված դիպլոմը, համապատասխան լիազորված մարմինների կողմից՝ հավաստագրերը, լիցենզիաները, արտոնագրերը, ինչպես նաև բոլոր մասնագետների մասով վերջիններիս գրավոր համաձայնությունները գնման առարկա հանդիսացող ծառայությունները մատուցելու վերաբերյալ, իսկ մատուցած ծառայության գնահատման համար պետք է ներկայացվի յուրաքանչյուր մասնագետի կողմից տեխնիկական հսկողության բնագավառում /որպես ճարտարագետ-շինարար, ճարտարագետ-էներգետիկ, ճարտարագետ-էլեկտրիկ, ճարտարագետ-հիդրոտեխնիկ/ առանձին օբյեկտների մասով մատուցված ծառայության մասին տեղեկատվությունը՝ հաստատված հայտը ներկայացնողի կողմից,

5) ծառայության մատուցման մեթոդաբանությունը՝ համաձայն սույն հրավերի Հավելված 1.2-ի,

6) իր կողմից հաստատված գնային առաջարկ՝ համաձայն սույն հրավերի Հավելված 2-ի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի առողջության կենտրոնի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 04.05.2021թ.-ին հայտարարվ[a] «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1-ին կետով արձանագրվել է, որ «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում Հավելված 1.1-ում՝ Մասնակցի կողմից որպես ճարտարագետ-շինարար, ճարտարագետ-էներգետիկ, ճարտարագետ-էլեկտրիկ, ճարտարագետ-հիդրոտեխնիկ ներկայացված Մարտին Պետրոսյանի, Սուրեն Գաբրիելյանի, Դավիթ Դավթյանի և Գուրգեն Հակոբյանի մասով նախկինում կատարված աշխատանքների ցանկում լրացված տեղեկությունը չի հավաստում վերը նշված մասնագետների շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության փորձառություն ունենալու հանգամանքը, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել ներկայացված փորձառության համապատասխանությունը հրավերի պահանջներին: Իսկ Հավելված 1.2-ում բացակայում է աղյուսակի 8-րդ կետի համաձայն պահանջվող օբյեկտի կառուցման առանձին տեսակի

աշխատանքները և կոնստրուկցիաների լաբորատոր փորձարկումների պլանը: Նշված պլանն իրենից ներկայացնում է նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների քանակի և փորձարկումների քանակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և ստանդարտների: Որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ՝ մասնակցի կողմից ներկայացված պայմանագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին (ներկայացված պայմանագիրը նմանատիպ չի), ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մառք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև 25.05.2021թ.-ը ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 24.05.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի marq.htg@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում: Սակայն Հանձնաժողովի 26.05.2021թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1-ին կետով արձանագրվել է, որ «Մառք» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների վերաբերյալ ընդհանրապես շտկում չի ներկայացվել, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Մառք» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մառք» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, ընդհանրապես չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.06.2021թ.-ի թիվ 26/26-1/9110-2021 գրությամբ «Մառք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/147 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մառք» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**